

Կենսապոլիմերների ֆունկցիոնալ անոտացիան *in silico* մեթոդների շարք է կենսաբանական մակրոմոլեկուլների գործառույթների ուսումնասիրման և կանխատեսման համար: Այս առարկան ուսումնասիրում է կենսաբանական մակրոմոլեկուլների ֆունկցիոնալ անոտացիայի մեթոդների առարկան, խնդիրները և գործնական կիրառումը: Առարկան հիմնված է կառուցվածքային կենսաինֆորմատիկայի գործնական և տեսական ասպեկտների վրա, ինչն ուսանողներին հնարավորություն է տալիս ձեռք բերված հմտությունները կիրառել սեփական փորձերում: Դասընթացը նախատեսված է չորրորդ կուրսի ուսանողների մոտ ձևավորելու տեսական և գործնական գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են նրանց հետագայում կենսաինժեներիայի և կենսաինֆորմատիկայի ոլորտի մասնագետ դառնալու համար: